ՀՏԴ 314(479.22) + 947.925

Doi:10.54503/0135-0536-2024.1-88

ՋԱՎԱԽՔԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1959–2014 ԹԹ. (Ըստ պաշտոնական մարդահամարների տվյալների)*

ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Վրաստան, Ջավախք, վրացիներ, հայեր, ազգաբնակչություն, ազգային կազմ, մարդահամար, պաշտոնական տվյալներ, դինամիկա:

Նախաբան

Վրաստանում ապրող հայերի շուրջ կեսից ավելին ապրում է Ջավախքում (ներկայիս վարչաբաժանմամբ՝ Սամցխե–Ջավախքի նահանգ և Քվեմո Քարթլի նահանգի Ծալկայի շրջան): Երկրորդ աշխարհամարտից հետո Խորհրդային Վրաստանում տեղի ունեցած վարչատարածքային վերաբաժանումները, պատերազմի ընթացքում և հետագայում տեղի ունեցած ժողովրդագրական մեծ ու փոքր տեղաշարժերը լրջագույն ազդեցություն ունեցան նաև Վրացական ԽՍՀ-ի հարավային հոծ հայաբնակ շրջանների թե՛ վարչական բաժանումների, թե՛ ժողովրդագրական պատկերի վրա: Նշված հատվածներից զանգվածորեն տեղափոխված մուսուլման տարրին (թուրք-մեսխեթցիներ) փոխարինելու եկավ վրացականը (քարթվելական), տեղի ունեցան նաև վարչական վերաբաժանումներ: Հատուկ քաղաքականության արդյունքում՝ 1950–1980-ական թվականներին Ջավախքի շրջաններում հայ բնակչությունը չի ավելացել և, ընդհակառակը, ինչ-որ տեղ նվազել է, իսկ վրացիների թիվը՝ կտրուկ ավելացել: Հետխորհրդային տարիներին ևս ջավախահայությունն ապրում է «ժողովրդագրական ճմեռ», և հայության թվաքանակն ունի նվազման միտումներ:

Վարչական վերաբաժանումները և ժողովրդագրական տեղաշարժերը Վրացական ԽՍՀ-ի հարավային հոծ հայաբնակ շրջաններում (1950–1960-ական թվականներ)

Հետպատերազմյան շրջանում՝ 1950–1960-ական թվականներին, Ջավախքում տեղի ունեցան վարչատարածքային վերաբաժանումներ և ժողովրդագրական նոր տեղաշարժեր: ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության հրամանով[1] Սամցխե–Ջավախքի (Ախալցխայի ու Ախալքալաքի նախկին գավառներ) հա-

---

* *Ներկայացվել է 25. VIII. 2023 թ., գրախոսվել է 08. IX. 2023 թ., ընդունվել է տպագրության 22. III. 2024 թ.:*

[1] *Տե՛ս* Государственный Комитет Обороны, Постановление гоко № 6279, от 31 июля 1944 г. Москва, Кремль (Сов. секретно), Турки – месхетинцы: Интеграция. Репатриация. Эмиграция. СПб., 2007, 439–441.

բավային և կենտրոնական շրջաններում ապրող մեծ թվով թուրք-մեսխեթցիների 1944 թ. նոյեմբերի 18–19-ն ընկած ժամանակահատվածում, իսկ նույն թվականի նոյեմբերի 25–26-ն Աջարիայում բնակվող թուրքերի, քրդերի և համշենահայերի վերաբնակեցրին Ուզբեկական, Ղազախական և Կիրգիզական ԽՍՀ-ներում, ընդհանուր թվով՝ 92,3 հազար մարդ: Նրանց գյուղերի կեսից ավելին ամայացան, իսկ մյուս մասը՝ շուրջ 60 տասնյակի հասնող բնակավայրեր, բնակեցվեցին Իմերեթից և այլ վայրերից տեղափոխված վրացիներով: Վերաբնակեցման հետևանքով Ախալցխայի և Ախալքալաքի գավառների միջև 1961 թ. ձևավորվեց ևս մեկ, հիմնականում՝ վրացաբնակ Ասպինձայի (Ասպնջակ) շրջանը[2]*:*

1961 թ. Վրացական ԽՍՀ-ում տեղի ունեցավ շրջանների խոշորացում, որի հետևանքով Ախալցխայի, Ասպինձայի, Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջանները միացվեցին՝ Ախալցխա կենտրոնով: Հարևան Ծալկայի շրջանը մտցվեց Թեթրիծղարոյի շրջանի մեջ: Խոշորացումների հետևանքով լուծարվեցին մի շարք ղեկավար հիմնարկներ (կուսշրջկոմ, շրջգործկոմ, կոմերիտշրջկոմ և այլն), փակվեցին նախկին շրջանային թերթեր: Այդ կապակցությամբ Ջավախքում ծայր առան դժգոհություններ, հեռագրեր հղվեցին խորհրդային բարձրագույն իշխանություններին: Այս նոր իրավիճակը, սակայն, ունեցավ կարճատև կյանք. իրեն չարդարացրած տեղական ինքնակառավարման ոլորտի այս նորամուծությունը վերացվեց, և 1965 թ. հունվարից խոշորացված շրջանները կրկին վերաբաժանվեցին:

Ժողովրդագրական պատկերը Ջավախքում ըստ 1959, 1970, 1979 և 1989 թթ. պաշտոնական մարդահամարների տվյալների

Հետպատերազմյան շրջանում Ջավախքի տարբեր շրջաններում ևս ժողովրդագրական պատկերը փոփոխվել է ոչ հօգուտ հայերի: Դա պարզորոշ երևում է ստորև բերվող աղյուսակների տվյալներից:

Աղյուսակ 1

Ջավախքի բնակչության թվաքանակը և ազգային կազմը 1959 թ. դրությամբ[3]

Շրջանը	Հայեր	Վրացիներ	Ռուսներ	Այլազգիներ	Ընդամենը
Ադիգեն	1.627 (8,4 %)	16.187 (83,31 %)	1.271 (6,54 %)	344 (1.77 %)	19.429 100 %

[2] *Ջավախքի 1945–1991 թթ. պատմության և ժողովրդագրական պատկերի մասին տե՛ս Սարգսյան. 2016, 299–312:*

[3] Samtskhe–Javakheti: Realities and Perspectives. UNDP: 2004, 59.

Ախալցխա	25.753 (52,2 %)	18.878 (38,29%)	3.684 (7,47 %)	984 (2,00 %)	49.299 100 %
Ասպինձա	2.068 (18,4 %)	9.081 (80,81 %)	60 (0,53 %)	28 (0,25 %)	11.237 100 %
Ախալ-քալաք	57.209 (91,0 %)	3.566 (5,68 %)	1.647 (2,62 %)	413 (0,66 %)	62.835 100 %
Բոգդանով-կա (Նինոծ-մինդա)	27.090 (85,0 %)	50 (0,16 %)	4.616 (14,49 %)	96 (0,30 %)	31.852 100 %
Ծալկա[4]	13.360 (29,30 %)	1.415 (3,10 %)	260 (0,57 %)	Հույներ՝ 27.300 (59,87 %), այլազգիներ՝ 3.265 (7,16 %)	45.600 100 %
Ընդամենը	127.107 (57,71 %)	49.177 (22,33 %)	11.538 (5,24 %)	32.430 (14,72%)	220.252 100 %

Աղյուսակ 2

Ջավախքի բնակչության թվաքանակը և ազգային կազմը 1970 թ. դրությամբ[5]

Շրջանը	Հայեր	Վրացիներ	Այլազգիներ	Ընդամենը
Ադիգեն	1.466 (7,23 %)	17.582 (86,73 %)	ռուսներ՝ 676 (3,33 %), այլազգիներ՝ 548 (2.70 %)	20.272 (100 %)
Ախալցխա	25.497 (49,12 %)	21.436 (41,30 %)	ռուսներ՝ 2.849 (5,49 %), այլազգիներ՝ 2.125 (4.09 %)	51.907 (100 %)
Ասպինձա	2.421 (19,38 %)	9.929 (79,47 %)	ռուսներ՝ 95 (0,76 %), այլազգիներ՝ 49 (0.39 %)	12.494 (100 %)
Ախալքա-լաք	63.954 (91,37 %)	3.926 (5,61 %)	ռուսներ՝ 1.297 (1,85 %), այլազգիներ՝ 815 (1,16 %)	69.992 (100 %)
Բոգդանով-կա (Նինոծ-մինդա)	32.399 (86,94 %)	321 (0,86 %)	ռուսներ՝ 4.344 (11,66 %), այլազգիներ՝ 203 (0.54 %)	37.267 (100 %)

[4] *Ավետյան. 2011, 50:*

[5] Samtskle–Javakheti: Realities and Perspectives. UNDP: 2004, 59.

Ծալկա[6]	14.569 (28,36 %)	1.625 (3,16 %)	ռուսներ՝ 260 (0,51 %), հույներ՝ 31.811 (61,93 %), այլազգիներ՝ 3.100 (6,0 %)	51.365 (100 %)
Ընդամենը	140.306 (58,57 %)	54.819 (22,88 %)	44.432 (18,55 %)	239.557 (100 %)

Աղյուսակ 3

Զավախքի բնակչության թվաքանակը և ազգային կազմը 1979 թ. դրությամբ[7]

Շրջանը	Հայեր	Վրացիներ	Այլազգիներ	Ընդամենը
Ադիգեն	1263 (6,32 %)	18.007 (90,15 %)	ռուսներ՝ 424 (2.12 %), այլազգիներ՝ 281 (1.41 %)	19.975 (100 %)
Ախալցխա	24.035 (47,74 %)	21.702 (43.10 %)	ռուսներ՝ 2.910 (5.78 %), հրեաներ և այլազգիներ 1.703 (3.38 %)	50.350 (100 %)
Ասպինձա	2.654 (21,38 %)	9.651 (77,76 %)	ռուսներ՝ 56 (0.45 %), այլազգիներ՝ 50 (0.40 %)	12.411 (100 %)
Ախալքալաք	63.692 (91,70 %)	3.067 (4,42 %)	ռուսներ՝ 1788 (2.57 %), այլազգիներ՝ 908 (1.31 %)	69.455 (100 %)
Բոգդանովկա (Նինոծմինդա)	32.231 (87,99 %)	370 (1,01 %)	ռուսներ՝ 3.330 (9,09 %), այլազգիներ՝ 701 (1,91 %),	36.632 (100 %)
Ծալկա[8]	13.996 (28,39 %)	1.710 (3,47 %)	հույներ՝ 30.811 (62,50 %), այլազգիներ՝ 2.783 (5,65 %)	49.300 (100 %)
Ընդամենը	137.871 (57,90 %)	54.507 (22,89 %)	45.745 (19,21 %)	238.123 (100 %)

[6] *Ավետյան. 2011, 50:*

[7] Samtskle–Javakheti: Realities and Perspectives. UNDP: 2004, 59; *հմմտ. Դավթյան. 1997, 26, 53, 60, 68, 85:*

[8] *Ավետյան. 2011, 50:*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2024 № 1

Աղյուսակ 4

Ջավախքի բնակչության թվաքանակը և ազգային կազմը 1989 թ. դրությամբ[9]

Շրջանը	Հայեր	Վրացիներ	Այլազգիներ	Ընդամենը
Ադիգեն	1.237 (5,81 %)	19.491 (91,58 %)	ռուսներ՝ 294 (1,38 %), այլազգիներ՝ 260 (1.2 %)	21.282 (100 %)
Ախալցխա	23.469 (42,81 %)	25.648 (46,78 %)	ռուսներ՝ 3.426 (6,2 %), այլազգիներ՝ 2.279 (4.16 %)	54.822 (100 %)
Ասպինձա	2.565 (18,68 %)	10.753 (78,31 %)	ռուսներ՝ 45 (0,33 %), այլազգիներ՝ 369 (2.69%)	13.732 (100 %)
Ախալքալաք	63.092 (91,29 %)	3.005 (4,35 %)	ռուսներ՝ 1.737 (2,51 %), այլազգիներ՝ 1274 (1.84 %)	69.108 (100 %)
Բոգդանովկա (Նինոծմինդա)	33.964 (89,63 %)	454 (1,20 %)	ռուսներ՝ 3.161 (8,34 %), այլազգիներ՝ 316 (0.83 %)	37.895 (100 %)
Ծալկա[10]	12.671 (28,51 %)	1.613 (3,63 %)	հույներ՝ 27.127 (61,04 %), աղրբեջանցիներ՝ 2.281 (5,13 %), այլք՝ 746 (1,68 %)	44.438 (100 %)
Ընդամենը	136.998 (56,78 %)	60.964 (25,27 %)	43.315 (17,95 %)	241.277 (100 %)

Այսպիսով, եթե 1959 թ. Ախալցխայի շրջանն ուներ 25.753 (52,24 %) հայ և 18.878 (38,29 %) վրացի բնակիչ, ապա նույն շրջանը 1970 թ. ունեցել է 25.497 (49,1 %) հայ ու 21.436 (41,3 %) վրացի բնակիչ, իսկ ահա 1989 թ. շրջանն ուներ 23.469 (42,81 %) հայ և 25.648 (46,78 %) վրացի բնակիչ: Նույն օրինակը կարելի է բերել նաև Ադիգենի շրջանի պարագայում. եթե 1959 թ. շրջանն ուներ 1.627 (8,37 %) հայ և 16.187 (83,31 %) վրացի բնակիչ, ապա 1979 թ. շրջանն ուներ 1263 (6,3 %) հայ և 18.007 (90,1 %) վրացի բնակիչ, իսկ 1989 թ.՝ ընդամենը 1.237 (5,81 %) հայ և 19.491 (91,58 %) վրացի

[9] Samtskle–Javakheti: Realities and Perspectives. UNDP: 2004, 59.

[10] *Ավետյան. 2011, 50:*

բնակիչ: Ախալցխայի շրջանում նույնպես վերոնշյալ թվականներին (1959–1989 թթ.) հայերի թիվը նվազել է 2.284-ով, իսկ վրացիներինը՝ աճել 6.770-ով: Ասպինձայի շրջանում գրանցվել էր վրացիների թվի աճ 1.672-ով, իսկ հայերինը՝ 497-ով: Գերազանցապես հայերով բնակեցված Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջաններում բնակչության թիվը 1989 թ. հասավ միայն 1917 թ. մակարդակին՝ շուրջ 100 հազար մարդու[11]: 1959–1989 թթ. ընթացքում, ընդհանուր առմամբ, նվազել է նաև Ծալկայի շրջանի հայության թվաքանակը և, եթե այն 1959 թ. կազմել է 13.360 մարդ, աճի միտումներ դրսևորել 1970, 1979 թթ. և, համապատասխանաբար, կազմել 14.569 (28,4 %), 13.996 (28,4 %), ապա 1989 թ. թիվը նվազել է՝ հասնելով 12.671-ի (28,51 %):

Նախկին Ախալցխայի և մասամբ Ախալքալաքի գավառների հենքի վրա համապատասխանաբար ձևավորված Ադիգենի[12] ու Ասպինձայի վարչական շրջանները, որտեղից 1944 թ. արտաքսվել էին թուրք-մեսխեթցիները, 1950–1960-ական թվականներին բնակեցվեցին հիմնականում վրացիներով (իմերեթցիներ, աջարներ և այլք):

Հայաբնակ Զավախքի և Հայաստանի Հանրապետության միջև արգելապատնեշը խորացնելու նպատակով 1989 թ. Բոգդանովկայի[13] շրջանում փորձ կատարվեց ստեղծել մի քանի սվանաբնակ գյուղեր: Բացի դրանից՝ ռուս դուխոբորների լքած Սպասովկա գյուղում Վրաստանի իշխանությունները վերաբնակեցրին տարերային աղետներից պարբերաբար տուժող աջարների[14]: Վերջիններիս համար հատուկ ծրագրով մեծ քանակի առանձնատներ կառուցվեցին նաև Ախալքալաքի շրջանի Կոթելիա, Հոկամ, Գոգաշեն, Զունչխա և այլ գյուղերում: Զավախքում խորհրդային 70 տարիների ընթացքում այս ծավալների շինարարություն դեռ չէր իրականացվել: Այդուհանդերձ, բնակլիմայական խիստ պայմաններին չդիմանալով՝ Ախալքալաքի շրջանում մնացին քիչ թվով աջարներ[15]: Աջարներով և սվաններով վերաբնակեցումը հաջողությամբ պսակվեց հարևան Ծալկայի շրջանում[16]: Վերաբնակվողները տեղավորվեցին Հունաստան գաղթած հույների շեներում:

---

[11] *Մելքոնյան. 2003, 230:*

[12] *Ադիգենը շրջանի կարգավիճակ է ստացել և Ախալցխայի գավառից առանձնացել է 1930 թ.: Ադիգեն ու Ասպինձա գյուղերն ավանի կարգավիճակ են ստացել 1961 թ.:*

[13] *Բոգդանովկա գյուղը հիմնադրվել է 1841 թ. Տավրիայի նահանգից արտաքսված աղանդավորների՝ դուխոբորների կողմից: Գյուղը բուռն զարգացում է ապրել այն բանից հետո, երբ 1930 թ. հունվարին դարձել է վարչատերիտորիալ նոր միավորման՝ Բոգդանովկայի շրջանի կենտրոնը: 1961 թ. այն վերածվել է ավանի, 1982 թ.՝ քաղաքի (տե՛ս Բոգդանովկայի շրջան: Տեղեկագիրք. 1992, 10):*

[14] Новикова. 2002, 237.

[15] *Օրինակ՝ աջարները քիչ թե շատ հաստատվեցին Սպասովկա, Գորելովկա, Բալանթա, Հոկամ, Զունչխա և այլ գյուղերում:*

[16] *Ծալկան 1930 թ. ստացել է շրջանի, իսկ 1957 թ.՝ քաղաքատիպ ավանի կարգավիճակ: 1936 թ. Ծալկայի շրջկենտրոնը Գունիա–Կալայից տեղափոխվել է Բարմաքսիզ գյուղը, որը և վերանվանվել է Ծալկա:*

Բնակչության դինամիկան Ջավախքում հետխորհրդային շրջանում

Աղյուսակ 5

Ջավախք երկրամասի հայ և վրացի բնակչության թվաքանակը և ազգային կազմի տոկոսային հարաբերակցությունը 1997 թ. դրությամբ[17]

Շրջան	Հայեր	Վրացիներ	Ընդամենը
Ադիգեն	1.407 (5,8 %)	22.222 (91,6 %)	23.629
Ասպինձա	2.780 (19,1 %)	11.660 (80,1 %)	14.440
Բորժոմ	3.816 (10,0 %)	29.518 (77,6 %)	33.334
Ախալցխա	23.644 (42,8 %)	25.688 (46,8 %)	49.332
Ախալքալաք	62.814 (91,3 %)	3.027 (4,4 %)	65.841
Նինոծմինդա (Բոգդանովկա)	34.697 (89,6 %)	451 (1,2 %)	35.148
Ընդամենը	129.158 (58,25 %)	92.566 (41,75 %)	221.724

Ինչպես տեսնում ենք, հայերի թիվն այս ընթացքում աճել է չնչին տոկոսով, եթե, առանց Բորժոմի շրջանի հաշվառման, 1989 թ. հայերի թիվը կազմում էր 124.327 կամ 63,2 %, ապա 1997 թ., արդեն Բորժոմի շրջանի հայերով հանդերձ, տարածաշրջանի հայ բնակչության թիվը կազմում էր ընդամենը 129.158 կամ 58,25 %՝ այն դեպքում, երբ այս ընթացքում վրացիների թիվը Բորժոմի շրջանի կցումով գրանցել է ահռելի աճ՝ 59.351 (30,2 %)-ից դառնալով 92.566 կամ 41,75 %: Բոլորովին այլ պատկեր կուրվագծվի, եթե դիտենք 2002 թ. տվյալները (տե՛ս աղյուսակ 6):

Փաստենք՝ խորհրդային տարիներին Վրացական ԽՍՀ-ում ծնելիության ամենաբարձր գործակիցն ունեցել է Ջավախքի տարածաշրջանը, որը շուրջ երկու անգամ բարձր է եղել երկրի մյուս շրջաններից: Երկրամասում բարձր ծնելիությամբ աչքի էր ընկնում հայ ազգաբնակչությունը, իսկ վրացիների մոտ բնական աճը շատ դանդաղ էր ընթանում: Այդուհանդերձ, ազգային և տնտեսական ոլորտներում առկա ոչ բարենպաստ պայմաններում արտագաղթի բարձր ցուցանիշները ծանրագույն ազդեցություն են ունեցել Ջավախքի հայության ժողովրդագրության վրա, որոնց հետևանքով տասնամյակների ընթացքում Ջավախքում գրեթե տեղի չի ունեցել ժողովրդագրական աճ, իսկ

[17] *Տե՛ս* Грузия, Самцхе–Джавахетия и «тюркское кольцо» вокруг Армении, демография. – https://regnum.ru/news/polit/202173.html *(տվյալները հրապարակել է Վրաստանի նախկին նախագահի՝ Սամցխե–Ջավախքի լիազոր-խորհրդական Մ. Գաչեչիլաձեն).*

հետխորհրդային տարիներին ջավախահայությունն ապրում է «ժողովրդագրական ճմեռ», և հայության թվաքանակն ունի նվազման միտումներ:

Աղյուսակ 6

Ջավախքի բնակչության թվաքանակը և ազգային կազմը 2002 թ. դրությամբ[18]

Նահանգը/ շրջանը	Ընդամենը	Վրացիներ	Հայեր	Ադրբեջանցիներ	Այլ
Ջավախք (Սամցխե–Ջավախք նահանգ և Ծալկայի շրջան)	228.486 (100 %)	92.505 (40,5 %)	124.831 (54,6 %)	2.051 (0,9 %)	8.736 (3,8 %)
1. Ադիգեն	20.752 (9,1 %)	19.860 (95,7 %)	698 (3,4 %)	17 (0,1 %)	169 (0,8 %)
2. Ախալցխա	46.134 (20,2 %)	28.473 (61,7 %)	16.879 (36,6 %)	13 (0 %)	645 (1,4 %)
3. Ասպինձա	13.010 (5,7 %)	10.671 (82 %)	2.273 (17,5 %)	0 (0 %)	60 (0,5 %)
4. Բորժոմ	32.422 (14,2 %)	27.301 (84,2 %)	3.124 (9,6 %)	24 (0,1 %)	1.930 (6 %)
5. Ախալքալաք	60.975 (26,7 %)	3.214 (5,3 %)	57.516 (94,3 %)	3 (0 %)	235 (0,4 %)
6. Նինոծմինդա (Բոգդանովկա)	34.305 (15 %)	476 (1,4 %)	32.857 (95,8 %)	2 (0 %)	958 (2,8 %)
7. Ծալկա	20.888 (9,1 %)	2.510 (12 %)	11.484 (55 %)	1.992 (9,5 %)	4.739 22,7 %)

Ինչպես տեսնում ենք, 1997 թ. հետ համեմատած, ամբողջ նահանգում եթե վրացիները կրճատվել են ընդամենը 2.571-ով, ապա հայերի մոտ տարբերության այդ թիվը հասնում է շուրջ 15.811-ը, որը, ըստ ուսումնասիրությունների, ունի էլ ավելի աճելու միտում՝ հաշվի առնելով այն հանգամանքը՝ երկրամասից հայ բնակչության արտահոսքը գնալով հասնում է մեծ չափերի:

[18] *Ըստ Վրաստանում 2002 թ. անցկացված մարդահամարի պաշտոնական տվյալների. տե՛ս* Широгзебиса да самоქалаქо თанасწорობის საკითхебში საქართველոს სახელმწიфо მинისტრის აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, მოსახლეობის 2002 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, საქართველოს მუდმივი მოსახლეობის განაწილება სქესისა და უპირატესი ეროვნებების მიხედვით. – https://smr.gov.ge/uploads/prev/__d769d8f4.pdf.

Աղյուսակ 7

Ջավախքի բնակչության թվաքանակը և ազգային կազմը 2014 թ. դրությամբ[19]

Նահանգը/ շրջանը	Ընդամենը	Վրա-ցիներ	Հայեր	Ադր-բեջան-ցիներ	Այլ
Ջավախք (Սամցխե–Ջավախք նահանգ և Ծալկայի շրջան)	179.353 (100 %)	86.268 (48,1 %)	88.397 (49,3 %)	1.319 (7,0 %)	3.367 (1,9 %)
1. ք. Ախալցխա[20]	17.903 (10 %)	12.836 (71,7 %)	4.780 (26,7 %)	*	286 (1,6 %)
2. Ախալցխա	20.992 (11,7 %)	13.603 (64,8 %)	7.242 (34,5 %)	*	147 (0,7 %)
3. Ադիգեն	16.462 (9,2 %)	15.985 (97,1 %)	379 (2,3 %)	*	99 (0,6 %)
4. Ասպինձա	10.372 (5,8 %)	8.961 (86,4 %)	1.379 (13,3 %)	*	31 (0,3 %)
5. Բորժոմ	25.214 (14,1 %)	21.987 (87,2 %)	2.168 (8,6 %)	*	1.059 (4,2 %)
6. Ախալքալաք	45.070 (25,1 %)	3.065 (6,8 %)	41.870 (92,9 %)	*	135 (0,3 %)
7. Նինոծմինդա (Բոգդանովկա)	24.491 (13,7 %)	1.029 (4,2 %)	23.266 (95,0 %)	*	196 (0,8 %)
8. Ծալկա	18.849 (10,5 %)	8.802 (46,7 %)	7.313 (38,8 %)	1.319 (7,0 %)	1.414 (7,5 %)

Վրաստանում անցկացված երկու (2002 և 2014 թթ.) պաշտոնական մարդահամարների տվյալների համաձայն՝ Ջավախքի 7 շրջանների ընդհանուր բնակչության թիվը նվազել է 49.133-ով (21,5 %-ով), ջավախահայությանը՝ շուրջ 36.434-ով (29,2 %), շուրջ 2–3 անգամ ընկել է նաև ծնելիության գործակիցը: Արդյունքում, օրինակ, Ախալքալաքի շրջանի հայության թիվը

---

[19] საქართველოს სტატისტიკის ეროვნული სამსახური, საქართველოს 2014 წლის მოსახლეობის საყოველთაო აღწერის ძირითადი შედეგები, თბილისი, 2018*: Վրաստանի՝ 2014 թ. ընդհանուր մարդահամարի տվյալների մեջ բացարձակ թվերով ներկայացված չէ նաև առանձին շրջանների ազգաբաշխական պատկերը: Ըստ այդմ՝ առանձին շրջանների հայության բացարձակ թիվը հաշվարկել ենք՝ հիմնվելով տոկոսային հարաբերակցության վրա: Ելնելով դրանից՝ առանձին շրջանների ազգային կազմը ներկայացնող կլորացված թվերի հանրագումարը կարող է փոքր-ինչ տարբերվել այդ նույն շրջանների՝ Վրաստանի պետական վիճակագրական մարմինների ամբողջական թվերից:*

[20] *Պաշտոնական աղբյուրում Ախալցխա քաղաքը, իբրև նահանգային կենտրոն, առանձնացված է համանուն շրջանից (տե՛ս* საქართველოს სტატისტიკის ეროვნული სამსახური, საქართველოს 2014 წლის მოსახლეობის საყოველთაო აღწერის ძირითადი შედეგები, თბილისი, 2018, 283–284, 299, 301)*:*

նվազել է 15.646-ով կամ 27,2 %-ով՝ 57.516-ից հասնելով 41.870-ի (1989 թ. ԽՍՀՄ պաշտոնական մարդահամարի տվյալներով՝ 63.092 հայ), Նինոծմին-դայինը՝ 9.591-ով կամ 29,2 %-ով՝ 32.857-ից հասնելով 23.266-ի (1989 թ. տվյալներով՝ 33.964 հայ): Նույն կերպ նվազել է Ախալցխայի երբեմնի հայաշատ շրջանի հայության թվակազմը՝ 16.879-ից հասնելով 12.022-ի (նվազել է շուրջ 4.857-ով կամ 28,8 %-ով, 1989 թ. տվյալներով Ախալցխայի շրջանում ապրել է 23.469 հայ): Հայաբնակ և երբեմնի հունաբնակ Ծալկայի շրջանի հայության թիվը 11.484-ից դարձել է 7.313 (նվազել է շուրջ 4.171-ով կամ 36,3 %-ով, 1989 թ. տվյալներով Ծալկայի շրջանում ապրել է 12.671 հայ): Փաստենք նաև, որ հիմնականում Հունաստան ներգաղթած հույների բնակավայրերի վերաբնակեցման արդյունքում Ծալկայի շրջանում կտրուկ աճել է վրացական տարրի (սվաններ, աջարներ և այլն) թիվը՝ 1.613-ից (1989 թ.) հասնելով 8.802-ի: Արդյունքում՝ եթե, օրինակ, Ծալկայի հայության տոկոսային հարաբերակցությունը շրջանում 2002 թ. եղել է 55 % (բնակչության թվի կեսից ավելին), ապա 2014 թ.՝ 38,8 %:

Նվազել է նաև ջավախահայության տեսակարար կշիռը, և եթե 2002 թ. հայերը կազմում էին Սամցխե–Ջավախք նահանգի ու Ծալկայի շրջանի ընդհանուր ազգաբնակչության 54,6 %-ը, ապա վերջին (2014 թ.) ցուցանիշներով այն չի հատում 50 %-ի սահմանագիծը (49,3 %):

Եզրակացություն

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ Ջավախքում 1950–1980-ական թվականներին հայ բնակչությունը չի ավելացել և, ընդհակառակը, ինչ-որ տեղ նվազել է, իսկ վրացիների թիվը՝ կտրուկ ավելացել: Առարկայական և ենթակայական մի շարք պատճառներով Ջավախքի հայ ազգաբնակչության թիվը շարունակում է նվազել նաև հետխորհրդային շրջանում:

Վահե Սարգսյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Սփյուռքի և հայ գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Վրաստանի հայության, մասնավորապես՝ Ջավախահայության հիմնախնդիրներ, Հայաստան–Վրաստան հարաբերություններում առկա բազմաբնույթ հիմնահարցեր, Վրաստանի տեղաբնիկ ժողովուրդների ու ազգային փոքրամասնությունների խնդիրներ: Հեղինակ է 1 մենագրության և ավելի քան 20 հոդվածի: ORCID:0009-0003-8437-5845; Vsargsyan83@ gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավետյան Ռ. 2011, Իմ Ծալկան (Ծաղկան), Երևան, «Էդիթ Պրինտ», 466 էջ:

Բոգդանովկայի շրջան: Տեղեկագիրք, 1992, կազմողներ՝ Կարախանյան Մ., Սնխչյան Ժ., Սեդրակյան Մ., Ղազարյան Մ. Եսոյան Մ., Վարդանյան Մ., Երանոսյան Ս., Բոգդանովկա, «Արշալույս» թերթի խմբագր., ՎՀ Բոգդանովկայի շրջանային տպարան, 102 էջ:

Դավթյան Ա. 1997, Հայկական և հայախառը բնակավայրերը Վրաստանում, Երևան, ԵՊՀ հրատ., 432 էջ:

Մելքոնյան Ա. 2003, Զավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, «Զանգակ- 97» հրատ., 544 էջ:

Սարգսյան Վ. 2016, Հայերը ԽՍՀՄ միութենական հանրապետություններում, Ձավախք և հարակից տարածքներ. – Հայոց պատմություն, հ. IV, գիրք II [Նորագույն ժամանակաշրջան (1945–1991 թթ.)], Երևան, «Զանգակ» հրատ., էջ 299–312:

Новикова Г. В., Дашко В. И. 2002, Самцхе–Джавахети: в эпицентре интересов, Российский институт стратегических исследований, Грузия: проблемы и перспективы развития, т. 2. М., РИСИ, с. 229–255.

Турки-месхетинцы: Интеграция. Репатриация. Эмиграция. 2007. СПб., «Алетейя», 456 с.

Грузия, Самцхе–Джавахетия и «тюркское кольцо» вокруг Армении, демография. – https://regnum.ru/news/polit/202173.html.

შერიგებისა და სამოქალაქო თანასწორობის საკითხებში საქართველოს სახელმწიფო მინისტრის აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, მოსახლეობის 2002 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, საქართველოს მუდმივი მოსახლეობის განაწილება სქესისა და უპირატესი ეროვნებების მიხედვით. – https://smr.gov.ge/uploads/prev/__d769d8f4.pdf.

საქართველოს სტატისტიკის ეროვნული სამსახური, საქართველოს 2014 წლის მოსახლეობის საყოველთაო აღწერის ძირითადი შედეგები, თბილისი, 2018, გვ. 380.

Samtskhe–Javakheti: Realities and Perspectives. UNDP. 2004. Tbilisi, 143 p.

ИЗМЕНЕНИЯ ЧИСЛЕННОСТИ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ ДЖАВАХКА В 1959–2014 ГГ.
(По официальным данным переписи населения)

ВАЭ САРКИСЯН

Р е з ю м е

Ключевые слова: Грузия, Джавахк, грузины, армяне, население, национальный состав, перепись населения, официальные данные, динамика.

Более половины живующих в Грузии армян проживают в Джавахке (по нынешнему административному делению: провинция Самцхе–Джавахк и Цалкский район провинции Квемо–Картли). Административно-территориальные перераспределения, происходившие в Советской Грузии после Второй мировой войны, а также большие и малые демографические перемещения, имевшие место в годы войны и впоследствии, оказали серьезное влияние как на административное деление, так и на демографическую картину южных регионов Грузинской ССР, густонаселенных армянами. На смену мусульманскому населению (туркам-месхетинцам), массово переселенным из упомянутых территорий, пришло грузинское (картвельское) население. Также произошло административое перераспределение территорий. В результате особой политики 1950–1980 гг. в районах Джавахка численность армянского населения не увеличилась, а, наоборот, где-то уменьшилась, тогда как численность грузин резко возросла. В постсоветс-

кие годы армяне Джавахка также переживают «демографическую зиму», и численность армян имеет тенденцию к сокращению.

Ваэ Саркисян – к. и. н., научный сотрудник отдела истории диаспоры и армянских колоний Института истории НАН РА. Научные интересы: проблемы армянства Грузии, в частности Джавахка, разные вопросы отношений Армения–Грузия, проблемы коренных народов и национальных меньшинств Грузии. Автор 1 монографии и более 20 статей. ORCID: 0009-0003-8437-5845; Vsargsyan83@gmail.com

DYNAMICS OF THE ARMENIAN POPULATION OF JAVAKHK FROM 1959 TO 2014
(According to the Official Census Data)

VAHE SARGSYAN

S u m m a r y

Keywords: Georgia, Javakhk, Georgians, Armenians, population, national composition, census, official data, dynamics.

More than half of the Armenians living in Georgia inhabit in Javakhk (currently administratively divided into Samtskhe–Javakhk Province and Tsalka District of Kvemo Kartli Province). The administrative territorial redistributions, that took place in the Soviet Georgia after the Second World War, as well as large and small demographic shifts, that happened during the war and in after years, had a serious impact on both the administrative divisions and the demographic picture of the heavily Armenian-populated southern regions of the Georgian SSR. The Georgian (Cartvelian) element came to replace the Muslim element (Turk–Meskhetians) who were massively moved from the mentioned territories. There was also an administrative redistribution of territories. As a result of the special policy implemented from 1950 to 1980 in the regions of Javakhk, the number of the Armenian population did not increase but, on the contrary, it decreased, while the number of Georgians increased sharply. In the post-Soviet years, the Armenians of Javakhk also experienced a “demographic winter”, and the number of Armenians has decreasing tendencies.

Vahe Sargsyan – Candidate of Sciences in History, Researcher at the Department of the History of Diaspora and Armenian Colonies of the Institute of History of NAS RA. Scientific interests: the problems of the Armenians of Georgia, particularly of Javakhk; various issues on relations between Armenia and Georgia, issues of indigenous peoples and national minorities of Georgia. Author of 1 monograph and over 20 articles. ORCID:0009-0003-8437-5845; Vsargsyan83@gmail.com

Պատմություն • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2024 № 1